

**Հ. Բ. Ը. ՄԻԱՍԻԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԾ  
ԳՈՒՄԱՐՈՒԵՑԱԿ ԴԵԿՏԵՄԲԵՐ 15ԻՆ, ՆԻՒ ԵՈՐՔԻ ՄԷԶ**

ՄԻՈՒԹԻՒՆԻ 1961ԻՆ 669,000 ՏՈԼՈՐ ՆԱԽԱՋԱՆ է  
ԱԶԳԱՊԱՀՊԱՆՄԱՆ ԶԵՐՆԱՐԿՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

— 88 —

Հ. Բ. Ը. Միութեան ԳՈՐԾ Ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ 15 Դեկտեմբեր 1962ին, նիւ լուսաբ նաւզվելի Պանդակին մէջ, ուր ներկայ էին 98 լրաւառու անդամներ՝ Պահառայէն և Ամերիկայի զանազան շրջաններէն: Ժողովին մասնակցեցաւ նաև իրանաւնի նրէ: Պանձևագույնի պատգամաւոր երգահան ու խմբավար Տիար Համբարձում Գէրզէկեան, Պէյրութէն:

Հիւսիսային Ամերիկայի Արեկելեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Միուն Արքեպոս Մանուկեանի աղօթքէն ետք, ժողովը բացուած յայտարարուեցաւ Միութեան նախագահ և ժողովին Առենապեան Տիար Ալեք. Մանուկեանի կողմէ: Միութեան Հիմնադիրներուն, հանգուցեալ բարերարներուն և անդամներուն յիշատակին նույիրուած յարգանքի խօսքէն ետք, Ատենապեալ կարգաց 1962ի ընթացքին իրենց մահկանացուն կնքած անդամներուն անուններու, որոնք օդատակար ծառայութիւններ մատուցած էին ազգին և Բարեգործականները: Ժողովականները, ի յարգանու ամէնուն յիշատակին, վայրէկեան մը ուսքի կեցան:

Ընդհ. Տնօրէն Տիար Գրիգոր Կիրակոսեան ներկայացուց Ընդհ. Ժողովի հրաւերը, յայտարարքով թէ անիկա իր ատենակին ուղարկուած էր արտասահմանի մեր բոլոր մարմիններուն և հրատարակուած՝ 22 թերթերու մէջ, արտասահման և Ամերիկա: Ստացուած էին 1853 ժոխանորդագիրներ, 2,250 քառէի ձայնով:

Նախագահնը հրաւերեց Տիար Տիգրան Պոյտանեանը որ Ատենադպիրի պաշտօնը կատարէ և ապա նշանակեց զանազան նախամական գործադրութեան անդամներու: Այս ատենական գործադրութիւններին ետք, Նախագահնը կարգաց բազանդակալից ճառ մը: Ան ընդհանուր ակնարկ մը նետելէ ետք Միութեան կատարած սպազուու ծառայութեանց վրայ, յայտնեց թէ անոր կեգրոնը Փարիզին նիւ նորք փախազգրուելէն ի վեր Բարեգործականը հոկայաքայլ վերելք մը ունեցած է: Տիար Մանուկեան իր այս յայտարարութիւնը հաստատեց պերճախօս թուանշաններով: այսուհետու 1910ին, նախ քան կեղրունին Ամերիկա փախազգրուիլը, Միութեան հարստութիւնը 3,800,000 տոլարի կը հասնէր: Ասոր գէմ՝ ներկային այդ հարստութիւնը տոմարական արժէքով կը յանդի 11,000 տոլարի, իսկ իրական արժէքով՝ 14,000 տոլարի:

Նախագահնը լայնորէն անդրազարձաւ Միութեան կատարած նախախամական դերին, Ամերիկանայ գաղութին առատածեան նույիրատուութեանց և Ամերիկան օրէնքներու ընծայութիւններուն գիւրութեանց, որոնց չնորնիւ Միութեանը այս երկրին մէջ վերանորոգուեցաւ, ուժեղացաւ և իր հարստութիւնը բազմապատկելով՝ անցեալ 21 տարիներու ընթացքին, կըցաւ իր հասոյթներին աւելի քան 9,000,000 տոլար յատկացնել մեր ազգին կրթական, մշակութային ու խնամատարական կարիքներուն:

Միութեան նիւթական կացութեան այս ոգեսորիչ պատկերը աւել ետք, նախագահը հանդամանորէն բացարեց անոր իրաւական գոյավիճակին և կանոնագրական պատշաճեցումներու վերաբերեալ հարցերուն մանրամասնութիւնները՝ Փարիզի անջատողական խմբակին դիրքը կեղրունին հանդիպ համարելով անհունորէն ցաւալի զրուագ մը մեր զմայլելի կազմակերպութեան արակերտութեանց մէջ: Ան խստօրէն դատապարտեց կեղրոնի դէմ զամ բացու Փարիզի խմբակին արարքը, Միութեան և հայ ժողովուրդի գերագոյն շահերուն վասակար գտնելով զայն:

Իր խօսքերը եղրակացնելով, նախագահը որ ամէն անդամ իր հասկնալի վրդովումը զազէ և որտի անդորրութեամբ կատարէ իր շինարար աշխատութիւնները, որովհետեւ ի՞նչ որ ալ ըլլայ զատարանին վժիրը, Միութեան իրաւական վիճակին կամ կանոնագրութեան մէջ հիմնական փափոխութիւն մը ընելու վերջնական իրաւասութիւնը ունեցող միակ մարմինը այս ընդհանուր ժողովն է, որ հարազատ ձայնը կը ներկայացնէ Բարեգործականի ամբողջ անդամակցութեան:

Ընդհ. Տնօրէն Տիար Գրիգոր Կիրակոսեան ներկայացուց Միութեան 1961 տարելը անի ընդարձակ Տիգեկագիրը, անկէ կարգաց կեդր. Վարչ. Ժողովի յատուկ գլուխուր և ամփոփելով տպաւորիչ տեղեկութիւններ տուաւ այս բարերար կազմակերպութեան կրթական ընդարձակածաւ գործունեկութեան ինչպէս նաև մշակութային և խնամատարական ձեռնարկներու մասին:

Հաշուառպետ Տիար Ս. Աստրունի կարգաց 1961ի հաշուական տեղեկագիրը, տալով նույնարկ եղած բացարձաւթիւնները: Այս աստրելը անդին Միութիւնը ունեցած էր 802,000 տուար ընդհանուր մաւաք մը և իր ազդապահպանման ձեռնարկներուն յատկացուցած է 669,000 տուար: Ժաղովականները ի ձեռին ունեին 71 էջերէ բազկացած Ընդհանուր Տեղեկագիրը և աշխատամբ Հաշուական Տեղեկագրին, և անոնցմէ քաղաքելով ներկայացուած իրազեւթեանց մթաւանշներուն մօտէն կը հետեւին և կը ստանային իրենց փափաքած լուսաբանութիւնները:

Կեդր. Վարչութեան Գանձապահ Տիար Զ. Դարակէօզեան, իր կարգին, անդրադարձ Միութեան 1961 տարեցրչանի հաշիւններուն և ամփոփ մէկ պատկերը տուաւ անոր արժեթիւններուն թղթապահներին տամարական արժէքով և այսորուան բրական արժէքով: Ժաղովականակութեամբ իմացաւ թէ, հակառակ անցեալ Մայիսին Սակարանին ունեցած անկամին Միութիւնը գարձեմուղթերուն իմաստուն մատակարարութեամբ:

Հաշուեքննի Յանձնախումբի Առենապետ Տիար Թ. Մարտիրոսեան յայտնեց թէ Յանձնախումբը կեդր. Վարչութեան հաշիւնները քննած էր և զանոնք գտած՝ կանոնաւոր և ճիշգ:

Կեսօրուան զագարէն վերջ, ժամը 2.30ին, Ժողովը վերսկսաւ իր աշխատանքներուն Ասրդիքներու փախանակութիւններ տեղի ունեցած Միութեան գործունէութեան զանազան կէտերաւն շուրջ, սրացաւ ժաղովականներ մասնաւոր վայրերու յատուկ կարօսութիւններ մատանշեցին և սոտցան Առենապետին ընդարձակ լուսաբանութիւնները: Այս խորհրդակցութիւններէն վերջ, Ընդհանուր ժաղովը գնահատանքով և միաձայնութեամբ վայրերացուց կեդր. Վարչութեան նիւթեանուր և Հաշուական Տեղեկագիրները:

Ժողովականներուն խնդրանքին վրայ, նախագահը մանրամասնորէն ներկայացուց Միութեան իրաւական անձնաւորութեան փոփոխութեան առնչութեամբ եւրոպայի կեդր. Յանձնախումբին յարուցած գործունութիւնները, սկիզբէն ի վեր, և պատկերացուց վէճին ներկայի վիճակը: Ընդհ. Ժողովը իմանալէ իոր արուած լուսաբանութիւնները, համոզուեցաւ թէ կեդր. Վարչութիւնը ամէն չանք թափած էր Միութեան կանոնագրին հետ կազ ունեցող հարցերը քննելու և լուծելու համար Բարեկարծականի ըրջանակին մէջ, խաղաղութեամբ և փոխադարձ հասկացողութեամբ, բայց Փարիզի խմբակը դիմած էր լոզանի արդարադատութեան: Ապա Ժողովը միաձայնութեամբ որդեգրեց բանաձև մը, որ Փարիզի անջատողական խմբակին արարքը իստորէն կեդր. Վարչութեան ստեղծուած ցաւալի վէճին կազակցութեամբ իր առած խոնեմ այլ հաստարայի երուսալեմ:

Նախագահ Տիար Մանուկեան խօսքը տուաւ Լիբանանի Երշանակի Պատուիրակ Տիար Պէրայէրեաննին, որ ըստ թէ Լիբանանի Երջ Յանձնաւորութիւնները աններելի կը գտնէ Եւրոպայի Յանձնաւորութիւնները զատարան գիմելու արարքը և թէ Բարեկարծականի կեդրունին Ամերիկա գտնուիլը որնուութիւն մը կը նկատեն մեր բույր կազմակերպութիւնները: Ան հիացում յայտնեց կեդրունի կատարած հոյակապ գործին և Ամերիկահայերուն ըրած զմայլելի զոհողութեան համար: Տիար Պէրայէրեան իր խօսքը վերջացուց Լիբանանի Երշանակին անվերապահ հաւատարմութիւնը կը յայտնէ կեդր. Վարչութեան ստեղծուած ցաւալի վէճին կազակցութեամբ իր առած խոնեմ այլ հաստարայի երուսալեմ:

Կազմանի քուէարկութեամբ, Ընդհ. Ժողովը վեց նոր անդամներ ընտրեց իրենց պաշտոնավորութեան ըլքանը աւարտած հինգ հոգիի և հրաժարեալ մէկ անձի տեղի Ընտրեալ անդամներն են՝ Տիար Զ. Դարակէօզեան, Տ. Պոյանեան, Ռ. Տօրեան, Ե. Աղաճանեան, Ց. Տէրտէրեան և Օ. Գետրոսոսեան:

Կարձիքներու լայն փոխանակութիւններէ, առաջարկներէ և թելազրութիւններէ ետք Միութեան ընդհանուր գործունէութեանց չուրջ, Աւղերձներու Յանձնախումբին կողմէ Տիար Ա. Փալատեան Ժողովին ներկայացուց գնահատանքի և չնորհակալութեան բանաձևերը:

Երեկոյեան ժամը 6ին, նախագահը փակուած յայտարարեց Հ. Բ. Բ. Միութեան 49րդ Ընդհանուր Ժողովը:

Մ. Ք.

Նշերա - بطريركية الارمن الارثوذكس المدير والمقرر المسؤول - صاحب النافعة رئيس الاساقفة هايكازون أبراهيميان

العدد ۱

طبع في مطبعة دير الارمن - القدس

يناير ۱۹۶۳

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.  
Editor - Archibishop Haigazoun Abrahamian. Armenian Convent, Jerusalem.

Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.